ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Արգենտինայի Հանրապետության միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետությունը և Արգենտինայի Հանրապետությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

շահագրգռվածություն ցուցաբերելով իրենց ժողովուրդների միջև բարեկամական կապերի, համերաշխության և համագործակցության ամրապնդման գործում,

կրկին անգամ հավաստելով իրենց անփոփոխ հավատարմությունը Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին և սկզբունքներին,

ցանկանալով իրագործել, զարգացնել և ամրապնդել համագործակցությունը երկու երկրների և ժողովուրդների միջև՝ միջազգային ճանաչում գտած հավասարության, փոխշահավետության, ինքնիշխանության և տարածքային անձեռնմխելիության փոխադարձ հարգանքի սկզբունքների վրա,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

1. Պայմանավորվող կողմերը հավասարության սկզբունքների վրա կզարգացնեն համագործակցություն՝ տնտեսական, գիտական, տեխնիկական և մշակութային բնագավառներում:

2. Նախորդ կետում նշված համագործակցության ձևերն ու պայմանները կհանդիսանան առանձին համաձայնագրերի առարկաներ, որոնք կճշտվեն դիվանագիտական խողովակներով:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը, որոնք կապ են պահպանում միմյանց հետ իրենց երկրների արտաքին գործերի նախարարությունների միջոցով, համաձայն են համագործակցել տնտեսական, տեխնիկական, տեխնոլոգիայի, մշակույթի և այլ ոլորտներում, որոնց շուրջ նրանք համաձայնություն ձեռք կբերեն:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի կամ նրա զարգացման հետ կապված այլ առանձին համաձայնագրերի մեկնաբանման ժամանակ ծագած յուրաքանչյուր տարակարծություն կլուծվի փոխադարձ համաձայնության, բարեկամության և համագործակցության ոգով՝ անկախ համապատասխան համաձայնագրի մյուս դրույթներից:

Հոդված 4

Սույն Ընդհանուր համաձայնագրում փոխադարձ համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ուժի մեջ կմտնեն յուրաքանչյուր Կողմի ներքին օրենսդրությամբ նախատեսված կարգի համաձայն: Փոփոխություններ կատարելու մտադրության մասին գրավոր պետք է հայտնվի մյուս Պայմանավորվող կողմին 6 ամիս առաջ:

Հոդված 5

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ Կողմերը միմյանց ծանուցում են, որ կատարել են յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի սահմանադրությամբ նախատեսված պահանջները:
2. Սույն Համաձայնագիրը կարող է դադարեցվել Պայմանավորվող կողմերից որևէ մեկի՝ նախօրոք՝ 6 ամիս առաջ, ծանուցելու դեպքում:

Կատարված է Բուենոս Այրես քաղաքում 1992 թվականի հունիսի 11-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և իսպաներեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1994 թվականի հոկտեմբերի 10-ից